



Ա. Նրիցեան.

† ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆ

Դեռ մի տարի էլ չէ անցել այն լիշատակելի օրից, երբ մենք *) կոմսուհի Ուլարովայի հետ ժողովուել էինք Երիցեանի տանը, Կովկասեան Հնազդիտական Ընկերութեան՝ Հիմնարկութեան ձեռնարկելու: Կոմսուհին ճանաչում էր Երիցեանին դեռ 80-ական թուականների սկզբից, երբ կոմսի հետ եկել էին Կովկաս՝ Հնարկիտական խուզարկութիւններ անելու և մեր Երիցեանին ընկերակցել էր նոցա:

Հէնց այն օրից, երբ Կովկ. Հնազ. Ընկերութեան զաղափարն սկսեց արծարծուել մեր մէջ, Երիցեանը վերականգնանացաւ: Նա թողեց իւր անկողինը, դեռ նոր կրած լինելով թոքերի ծանր բորբոքումը և շուտով դուրս եկաւ տանից ու ներկայ գտնուելով բացուելիք Հնազ. Ընկ. նոյն իսկ առաջին ընդհանուր ժողովին, որ տեղի ունեցաւ Հասարակական գրադարանում, մի փառաւոր ճառախօսութիւն արեց, ընտրուեց անդամ այն լանձնաժողովի, որ պէտքէ մշակէր ընկերութեան կանոնադրութիւնը և Դուք, մեծարդոյ ընկերակիցներ, տեսաք այնուհետեւ թէ՛ որ աստիճան լուրջ էր վերաբերում նա մեր ընդհանուր դործին, միշտ եռանդոտ մասնակցութիւն ունենալով մեր վիճարանութիւնների մէջ:

Դեռ երեկ էր, նոյեմբերի 3-ին 1901 թուի, երբ Երիցեան կարգաց մեր ժողովումը շատ գնահատելի և ոչ ոքից դեռ չուսումնասիրած իւր աշխատութիւնը՝ «Հայերի սկզբնական ծառայութիւնը Ռուսաստանի Հիւսիս արեւելքի հետ»:

Ողէքոտանդը Երիցեանը դեռ գիմնագիտական նստարանից, որպէս վկայում է նորա զպրոցական ընկեր՝ Հայոց նահապետ — կենցաղագիր Պերճ Պաօշեանցը, աչքի է ընկնում իւր խե-

*) Այս յօդուածի ռուսերէնը չարգելի յօդուածագիրը կարգաց Ռուսաց Կայսերական Հնազդիտական Ընկերութեան Կովկասի ճիւղի նիստում. Խմբ.

լացիութեամբ ու առանձին սիրով առ զրականական պարագայ-
մունքները և նոյն իսկ հրատարակում էր լրագիր: Գա մօտ
կէս դար առաջ էր, Տփլիսի այն օրերի միակ զիմնադրւումը:

Երիցեանի ծնողքը Տփլիս են գաղթել Սանահին հայկա-
կան գիւղից, որը գտնուում է վաղեմի Հռչակաւոր Սանահինի
վանքին կից, որ ունեցել է ոչ պակաս Հռչակաւոր ուսումնա-
դէտ վարդապետներ:

Երիցանց կամ «Երիցանց» տունը, իբրև թէ պատմա-
կան «Սևորդեաց» մնացորդն է և «չիրաւի, աւում է Երիցեանը
իւր ինքնակենսադրութեան մէջ, մեր տոհմը բոլորն էլ սև
էին»: Երիցեանի պապ Տէր Յովսէփը մի շատ յամառ բնաւո-
րութեան տէր մարդ էր և խիստ գրասէր, իսկ հայրը աստիճա-
նաւոր, թէ և ոչ բնաւոր, սակայն իւր որդւոց, փոքրիկ
Աղէքսանդրի ուսմանը հետևող:

Աղէքսանդրը զիմնադրական ուսումն միայն ստացաւ, նիւ-
թականի պակասութեան, ինչպէս և հիւանդութեան պատ-
ճառով և չկարողայաւ իւր ուսման ընթացքը բոլորացնել հա-
մալսարանականութի:

Կեանքի ապրուստ հայթհայթելու ստիպմամբ մտաւ պե-
տական ծառայութեան, նախ Կազիսոնայա պալատը, ապա նա-
հանգական վարչութիւնը և պետական կալուածքների վար-
չութիւնը և հուսկ յետոյ Հնազդական յանձնաժողովը (Архео-
графическ. Комиссія). նոյն այն ժամանակը, երբ յայտնի
Բերթէի զլիտուր դեկավարութեամբ սկսեցին հրատարակուիլ
այդ յանձնաժողովի աշխատութիւնները: Հնազդական այդ
գրադմունքները վերջնականապէս վճռեցին Երիցեանի կեան-
քի ուղղութիւնը. նա սիրեց հնագիտութիւնը և եռանդով անձ-
նատուր եղաւ նորան և օժանդակիչ գիտութիւններին, որպի-
սիք են աշխարհագրութիւնը, պատմութիւնը և ազգագրու-
թիւնը, գլխաւորապէս Կովկասեան աշխարհի, որոնց և ամենայն
սիրով նուիրեց իւր յետագայ կեանքը: Այնուհետև Երիցեանը
մասնակից եղաւ Տիկէյիին՝ Ղազարի և Բորչալուի զիւղացիների
տնտեսական դրութիւնը ուսումնասիրելու:

Ռուս-թրքական պատերազմի ժամանակ, Երիցեանը իբրև

քաջ ծանօթ առաջադր Եփեսոսի սղգութիւններէ պատմութեանը և դրութեանը, կոչուեցաւ պետութիւնից իրրև առանձին լանձնարարութեանց պաշտօնեայ՝ ծառայակցելու Լօռու-Մելիքեանին և Ղելիօֆնիկեանին, որպիսի պաշտօնավարութիւնից օգտուելով՝ Երիցեանը առաւել ևս ուսումնասիրեց Բարձր Հայքը և Հրատարակեց Հայկական ալդ նաՀանդների մանրամասն աշխարհագրութիւնը Հանդերձ պատմական ծանօթութիւններով: 80-ական թուականներում կառավարութիւնը ընտրեց Երիցեանին, որպէս քաջ Կովկասագէտի աջակցելու կոմս և կոմսուհի Ուլարովներին նոցա Կովկասում ձեռնարկած Հնագիտական ճանապարհորդութեան գործում: Բացի դրանից Երիցեանը մասնակցեց Կովկասեան Հնագիտական Ե-բորդ ժողովի պատրաստողական պարապմունքներին և նոյն իսկ ժողովի ուսումնական պարապմունքներին:

1836 թուին Երիցեանը առ միշտ թողեց ամենայն տեսակ պաշտօնավարութիւն և ամբողջապէս անձնատուր եղաւ իւր սիրած գործին՝ Հայոց վերջին երկու դաշերի պատմութեանը և ընդհանուր Կովկասագիտութեանը:

Բաւական է թուել Երիցեանի աշխատութիւնները, որպէսզի Համոզուինք, թէ նրբան աշխատանք և Համբերութիւն է դրել նա նոցա վերայ: 1872 թուին Երիցեանը ձեռնարկեց Հրատարակել «Кавказская старина» Հանդէսը, որի անունը ցոյց է տալիս նորա բովանդակութիւնը:

Երիցեանը գիտեղում էր Կովկասեան ռուս թէ Հայ լրագիրներում իւր բազմափորձ մենագրութիւնները, բազմացել Կովկասի պատմական և Հնագիտական ճիւղերի մասին: Նորա աշխատութիւնները բարձր գին ունէին իրանց թէ գրական և թէ, մանաւանդ, պատմական արժանաւորութիւններով և լրագիրները որպէս իրանց էջերի զարդ էին ընդունում նոցա:

Ահա Երիցեանի աշխատութիւնների գէթ մի փոքրիկ ցուցակը՝ 1) Чума въ Закавказьѣ 1879 թ. 2) Վենետիկի Միթարիանք 1883 թ. 3) Исторія католицизма въ Грузіи 4) և 5) Экономическій бытъ государственныхъ крестьянъ Казахскаго и Ворчалинскаго уѣздовъ, 6) Исторія хо-

Черной эпидемии въ Закавказьѣ, 7) Историческій обзоръ Закавказья и Армяне 1883 г. 8) О. Землетресеніяхъ на Кавказѣ и въ переднои Азіи 9) Первоначальное знакомство Армянъ съ Северо-Восточною Русью. 10) Грузинскій Царевичъ Давидъ, 16) Патріархъ всѣхъ Армянъ Нерсесъ V и князь и княгиня Воронцовы въ ихъ частной перепискѣ 17) Историческое и современное положеніе армянской женщины въ связи съ нравственностью Армянъ. և այն և այլն:

Բայց Երեցեանի հիմնական երկերն էին՝ Ներսիսեան զրպրոցի պատմութիւնը և Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում: Նա պատրաստում էր նոյնպէս Յովսէփ Երկայնարագուկ Երզուլեանի պատմութիւնը, նորա զրադրութիւնը յայտնի պատմական անձանց հետ, բազմաթիւ ծանօթութիւններով, Ռուսերէն լեզուով:

Ի դէպ եմ համարում ասել, որ Երեցեանը ինձ ասաց որ՝ «եթէ այս անգամ էլ չմեռայ, պէտք է Կովկասեան Հայոց Բարեգործական րնկերութեան պատմութիւնը գրեմ»:

Ոչ միայն յամառ, նստողական աշխատանքով, այլ և դանադան ճանապարհորդութիւններով էր Երեցեանը հարստացնում իւր զիտական շտեմարանը, բոլր այնքան կատարեալ կերպիւ մարտում էր նորա ձկուն խելքը, խիստ տրամաբանութիւնը և արտաքոյ կարգի լիշողութիւնը: Երեցեանը մասամբ իւր պաշտօնական պարտաւորութիւններով, մասամբ ևս անկախ զլիւով այցելել էր և ուսումնասիրել Կովկասի և Անգլիոյկասի, նա և հիւսիսային և միջին Հայաստանի գրեթէ բոլոր անկիւնները: Իգուր չէին Երեցեանին մօտիկ ճանաչողները այնքան ուրում և յարգում և ուղղակի անուանում նորան շարժուն հնադիտական մատենադարան, իսկ այս տողերի գրողը արդէն տասնհինգ տարիներից ՚ի վեր յատկացրել էր Երեցեանին «unicum» տիտղոսը, որ ասել է՝ «եզակի»:

Երեցեանը ճշտապէս զիտէր թէ ինչ հնադիտական նմուշ և որ տեղ կամ ում մօտ է գտնուում Տփիսխում կամ այլուր և այսպիսով էր ահա, որ նա Աստուած զիտէ թէ որտեղից, և

ինչպէս էր ձեռք գցել պատմական գրութեանց այնքան մեծ քանակութիւն, որ առանց այդ ոչնչացած, կամ փտած կը լինէր: Բաւական է լինել, որ բացի տպած գրքերի հարստագոյն մատենադարանից՝ Երիցեանը ժողովել էր մօտ 16,000 պատմագրական փոքր և մեծ վաւերացողութիւն, որոնցից հմուտ ձեռքով նա քաղում էր իւրեւ անպառ աղբիւրից իւր պատմական երկերի նիւթերը: Այսպէս նա ունէր երեք մեծ հատոր ձեռագիր գրադրութիւն Յովսէփ կաթողիկոսի, որ պէտք է նորան նիւթ մատակարարէր կաղմելու այդ պանծալի կաթողիկոսի լայնատարած սրտմութիւնը և նորա գրադրութիւնը Մեծ Եկատերինա կայսրուհու ժամանակի խոշոր, պատմական անձնաւորութիւններէ հետ, որը, աւանդ, մնաց անկատար:

Ուշագրութեան արժանի է, որ այդ բազմութիւն և բիւրեւանդ վաւերացողութիւնի տէրը մըցում էր նոցա հետ իւր անձնական գիտութեամբ. ինչ հարց էլ որ չգարթեցնես, լինի նա վերաբերեալ Կովկասագիտութեան որ և է ճիւղին՝ աշխարհագրական, ազգագրական և կամ հնաբանական, Երիցեանը հանդիսանում էր, որպէս հմուտ մասնագէտ և իսկոյն ձեզ կրներկայացնէր բոլոր հարկ եղած գրական աղբիւրները: Եւ ո՞վ է որ չէ օգտուել Երիցեանի խորհուրդներով և ցուցմունքներով, որոնք նա սիրով մատակարարում էր բաց ձեռքով:

Յոլոր բնիկ տեղական և ռուսական լրագիրները միաձայն ոգրացին Երիցեանի մահը, ասեմ տարաժամ, որովհետեւ 60 տարեկան էր միայն մեր Աղէքսանդրը, չնայելով նորա զառամեալ կալմուածքին. մարմնի բոլոր կենսունակութիւնը նա զիշեր ցերեկ և անխնայ ծախսել էր իւր պատմագրական պարագմանց վերայ: Սակայն նա վախճանուեց իւր հոգեկան ոյժերի և մտաւոր դարձացման գաղաթնակէտին հաղիւ հասած: Բոլոր գրկթէ յրազներէի էջերում ինձանից աւելի զօրաւոր գրիչներ գրատեսցին թէ ինչ է կորցնում Կովկասագիտութիւնը Երիցեանի մահուամբ...

Թանգազին հանդուցելու լիշատակը յարգելու համար տաճար լջառ. նորին Սրբութիւն Ահհափառ Ասթուղիկոսը: Նա մի ազդու դամբանական խօսեց, որի նիւթն էր այն, թէ

մինչդեռ Հայ կրեստոսները և իշխանները Հետաքրքրում են այն խնդրով, թե ինչ խորտիկներ են ուտում արդեօք երկնքումը Ենովքն ու Եղիան, այստեղ իրանց Հէգ խրճիթներում Երեւեանները կանգառ են կրծում:

Եկեղեցին էին եկել աղօթելու վրաց զիտնական եպիսկոպոս Կիրիոնը և Կայսերական Հնազիտական Ընկերութեան Կովկասեան բաժնի գլխի՝ Բոլոր անդամները և նոցանից մէկը — Հնագէտ Ջանաշվիլի, մի զգացում ճառ խօսեց:

Յիրա ի զարմանալի է այն սկզբունքը և անսպառ ու անշիջանելի եռանդը, որով Աղէքսանդր Երիցեանը, չնայած իւր նիւթական սուղ միջոցներին և այն միջին և խաւար ժամանակներում, երբ Հնազիտութիւնը չէր զարթեցնում մեր մէջ և ոչ մի Հետաքրքրութիւն, նա, Երիցեանը, կարողացաւ ժողովել այնքան թանգազին, պատմական վաւերացիւթիւ և խորասուզուելով նոցա մէջ՝ ամբողջ տասնեակ տարիներ անընդհատ ուսումնասիրել նոցա, կարգի բերել և նոցանից գեղեցիկ ամբողջութիւն յօրինել, որպիսիք են նորա պատմական աշխատութիւնները:

Ահա օրինակի արժանի մարդ. ահա թե ի՞նչ կարող է անել մի Հատիկ անձնաւորութիւն, որը ունի իւր կրծքի մէջ անհուն սէր առ Հայրենիս, նորա անցեալը և ապագայ բարդաւճումը:

Յանկանանք, որ տաղանդալի, բայց Համեստ և մեր սրտին թանգազին, վաստակաւոր Աղէքսանդր Երիցեանի լուսաթաթախ անձնաւորութիւնը ունենայ իւր արժանաւոր Հետեւողները բաղմացեղ Կովկասի ուսանող երիտասարդութեան մէջ:

Թող սուրբ լինի մեր մէջ Հռչակաւոր Ընկերակից Աղէքսանդր Երիցեանի քիշատակը:

ԲԺՂԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ